ունքները։ Հայերի պահանջը նա համարում էր «միջամտութիւն Վրաստանի ներքին գործերին»։ Բախումը դառնում էր անխուսափելի, և դեկտ. 13-ին բռնկուեց հայ-վրացական զինուած ընդհարումը։

Պատերազմը սկսուելուց յետոյ էլ Հայաստանի կառավարութիւնը աշխատեց գտնել խաղաղ միջոցներ՝ վէճի լուծման։

Դեկտ. 14-ին արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը Թիֆլիս ուղարկեց մի նոր դիմումնագիր, որով, ի միջի այլոց, գրում էր. «Վրաց կառավարութիւնը ո՛չ միայն ընդառաջ չգնաց մեր փափագին՝ սահմանների հարցը խաղաղութեամբ լուծելու, այլ և կամենալով ամրապնդել օտար հողի գրաւումը՝ ձեռնարկեց արշաւանքի խաղաղ բնակչութեան դէմ՝ ենթարկելով արիւնահեղ ու դաժան բռնութիւնների, մինչև իսկ հայկական գիւղերը թնդանօթների կրակի մատնելով։ Հայաստանի կառավարութիւնը չի կարող մնալ անկարեկից դիտողի դերում, որովհետև հարևան պետութեան զօրքերը սխրագործութիւններ են անում Հայաստանին պատկանող հողի վրա և գնդակահարում են Հայաստանի քաղաքացիներին։ Իմ կառավարութիւնը՝ ջերմօրէն ձգտելով առաջն առնել ապագայ բարդութիւնների՝ ուզում է հաւատալ, որ ձեր կառավարութիւնը՝ յարգելով ժողովրդի բաղձանքն ու Հայաստանի իրաւունքը՝ կը փութայ սեփական նախաձեռնութեամբ դուրս հանել զօրքերը, հնարաւորութիւն կը տայ ձեր պատգամաւորութեան յարաբերութեան մէջ մտնել մերինի հետ, կը վերականգնէ հեռագրական կապը և դրանով կամրացնէ երկու հարևան հարազատ պետութիւնների խաղաղ կենակցութիւնը»։

Այս դիմումն էլ մնաց ձայն բառբառոյ յանապատի։

Զինուած ընդհարման առաջին իսկ օրերին միջամտեց, այդ պահուն Ղարաքիլիսայում գտնուող, անգլիական սպայ կապիտան Գրինը, որ առաջարկեց՝ հայ-վրացական խորհրդակցութիւն կազմել և վէճը լուծել խաղաղ ճանապարհով։ Հայաստանի կառավարութիւնն ընդունեց և Ղարաքիլիսա ուղարկեց մի պատուիրակութիւն, որի մէջ մտան՝ Մ. Ցարութիւնեանը (նախագահ), Ս. Խաչատրեանը, Ս. Մամիկոնեանը, Ա. Խոնդկարեանը և Գ. Տէր-Խաչատրեանը։ Միևնոյն ժամանակ, դեկտ. 18-ին, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը հեռագրեց Վրաստանի կառավարութեան. «Խորհրդի որոշումով կառավարութիւնն այսօր պատուիրակութիւն է ուղարկում կապ. Գրինի և Վրաստանի լիազօրների հետ միասին, եթէ վերջիններս գան, պատերազմական գործողութիւնները վերջացնելու պայմանները մշակելու համար։ Մի պայման Խորհուրդը համարում է միանգամայն անհրաժեշտ. Հայաստանի կառավարութիւնն իր զօրքերը Բորչալուի գաւառից կարող է հանել միայն այն դէպքում, երբ երաշխիք ստանայ, որ այս, ինչպէս և Ախալքալաքի գաւառը կապահովուեն Վրաստանի նոր յարձակումներից... Մեր պատգամաւորութիւնը ուրախ կը լինի հանդիպելու ձեր լիազօրների հետ, որպէսզի համերաշխաբար աշխատեն լաւագոյն պատմական աւանդութիւններով կապած և ընդհանուր մշակութային տենչերով համակուած երկու հարևան ժողովուրդների բարօրութեան համար»։

Այս դիմումն էլ անմիջական գործնական հետևանքներ չունեցաւ. վրացիները պահանջեցին, որ հայերը հեռանան Լոռիից, իսկ իրենք մնան Լոռիում և Ախալքալաքում։ Բնականաբար, հայերը չէին կարող ընդունել